ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «23» հոկտեմբերի 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 23-ին, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Բաղդասարյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն.
Ա. Սերոբյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.
Գ. Ախոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահական ծառայության ղեկավար.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավապայմանագրային բաժնի պետ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Բաղդասարյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին.
- Ընթացակարգի հրավերով սահմանված էր, որ մասնակիցը պետք է ընդգրկված լինի **Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի Իրավասու աուդիտորական կազմակերպությունների ցանկում, ինչի մասին** Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ-ն հայտնել է, որ չի կարող հավաստել, որ ընկերությունը ընդգրկված է վերը նշված ցանկում:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ-ն ընդգրկված չէ **Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի Իրավասու աուդիտորական կազմակերպությունների ցանկում** /քաղվածքը կցվում է/, իսկ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի և **Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2015 թվականի ապրիլի 8-ին կնքված ծրագրի համաձայնագրի 2-րդ մասի «Բ» կետի 3-րդ ենթակետով սահմանված է, որ ընկերության աուդիտը պետք է իրականացվի Բանկի կողմից ընդունելի**

աուդիտորական կազմակերպության կողմից, ուստի Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ-ն չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ՝ անբավարար:

3. Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մերժել:
4. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակցի որոշման նպատակով՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ–ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. **Հարցը հանվել է**:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. **Հարցը հանվել է:**

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Բաղդասարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սերոբյան _____

Գ. Ախոյան _____

Ա. Պետրոսյան _____

Ա. Վարդապետյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____